ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետափնյա, (093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2015թվականի N 17-Ն

2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել 28.10.2015 թ-ի ավագանու 7-րդ նիստի հետևյալ օրակարգը՝

1. Համայնքի 2015թ-ի 3-րդ եռամսյակի բյուջեի հաղորդման մասին

2.Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին

Կողմ 4 **դեմ 0** **ձեռնպահ 0**

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝ 1. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ

2. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

4. ԹԱՄԻՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետափնյա, (093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2015թվականի N 18-Ն

2015 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել 2015թ-ի համայնքի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամտային և ծախսային մասերի կատարողականները ի գիտություն:

Եկամուտների գծով՝	54664,97	հազ. դրամ	86,62%
Ծախսերի գծով՝	54664,97	հազ. դրամ	34,38%

Կողմ 4 **դեմ 0** **ձեռնպահ 0**

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝ 1. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ

2. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

4. ԹԱՄԻՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետափնյա, (093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2015թվականի N 19-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1018-Ն, ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 681-Ն և ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի թիվ 997-Ն որոշումներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Թույլատրել Գետափնյա համայնքի ղեկավարին՝ «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի» շրջանակներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված համայնքի սեփականություն համարվող 695,79 հա հողամասերը համապատասխան փոխհատուցման դիմաց օտարել Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

2.Հաստատել օտարվող հողամասերի փոխհատուցման ենթակա գումարները՝ համաձայն հավելվածի:

3.Սահմանել, որ Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման և օտարման դիմաց տրվող փոխհատուցման մասին պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք գործարքի պայմանները, ինչպես նաև պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը:

4.Հանձնարարել համայնքի ղեկավարին սույն որոշման պահանջներին համապատասխան Երևանի քաղաքապետի հետ (որի անունից 2015թվականի հուլիսի 17-ի թիվ 2186-Ա որոշման համաձայն հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալը /ծրագրի ղեկավարը) կնքել Հասարակության և

պետության կարիքների համար սեփականության օտարման և օտարման դիմաց տրվող փոխհատուցման մասին համապատասխան պայմանագիր:

Կողմ 4 **դեմ 0** **ձեռնպահ 0**

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝ 1. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ

2. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

4. ԹԱՄԻՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ԱԶԱՏՅԱՆ**